ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

-- ----- 2024 թվականի №-Ա

«ՏՈՏԱԼ ԳՐՈՒՊ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԱՌԱՆՑ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ՌԱԴԻՈՀԱՃԱԽԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԻՐՈՒՅԹԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ ԴԱԴԱՐԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով՝

ա) Հայաստանի Հանրապետության բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության 2024 թվականի օգոստոսի 2-ի №01/11.1/6601-2024 գրությամբ ներկայացված տեղեկատվությունն առ այն, որ էլեկտրամագնիսական իրավիճակների հետազոտումների արդյունքում Երևան քաղաքի Արին-Բերդ փողոցի №1/2 հասցեում հայտնաբերվել է «Տոտալ Գրուպ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության (այսուհետ՝ Ընկերություն) կողմից առանց թույլտվության 902.5-915.0ՄՀց ռադիոհաճախականությունների տիրույթում շահագործվող բջջային կապի վերահաղորդակ,

բ) առանց թույլտվության ռադիոհաճախականությունների տիրույթի օգտագործումը դադարեցնելու վերաբերյալ Ընկերությանն ուղղված Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2024 թվականի օգոստոսի 5-ի №ԱԾ/34.2-Մ2-9/3633-2024 գրությունը, որի վերաբերյալ որևէ փաստարկ չի ներկայացվել,

գ) որ իրավասու պետական մարմնի ներկայացրած տեղեկատվությամբ փաստվել է Ընկերության կողմից առանց թույլտվության 902.5-915.0ՄՀց ռադիոհաճախականությունների տիրույթի օգտագործումը, և

հիմք ընդունելով «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի «ժդ» ենթակետը, 3-րդ կետի «ե» ենթակետը, 60-րդ հոդվածը և «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքի 19-րդ

հոդվածի 2-րդ մասը՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը **որոշում է**.

1. Ընկերությանը՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից դադարեցնել առանց թույլտվության 902.5-915.0ՄՀց ռադիոհաճախականությունների տիրույթի օգտագործումը:
2. Սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից երեսնօրյա ժամկետում կարող է բողոքարկվել Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով կամ երկամսյա ժամկետում՝ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան, և դրա բողոքարկումը չի կասեցնում որոշման գործողությունը կամ կատարումը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Ընկերությանն օրենքով սահմանված կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Գ. ԲԱՂՐԱՄՅԱՆ

ք. Երևան
-- ---------2024թ.